Հայ պատմագրություն
5-րդ դարի պատմիչներ

ԵՂԻՇԵ

(410-470)

Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի կրտսեր աշակերտներից է: Ծնվել է 410-ական թվականների սկզբին: Նախնական կրթությունը ստանալով մեծ ուսուցչապետներից՝ շուրջ 435 թվականին, ուսանողական մի խմբի հետ ուղարկվել է հունական գիտության նշանավոր կենտրոն Ալեքսանդրիայի համալսարան, որտեղ ձեռք է բերել հիմնավոր գիտելիքներ: Շուրջ 441 թվականին վերադարձել է հայրենիք, ձեռնադրվել վարդապետ:

Տիրապետել է հունարենին, ասորերենին և պարսկերենին: Ավանդության համաձայն՝ որպես քարտուղար սպասավորել է սպարապետ Վարդան Մամիկոն-

յանին, որը Սահակ Պարթևի թոռն էր և Վաղարշապատի Սահակ-Մեսրոպյան դպրոցի սան:

Եղիշեն 449 թվականին Վարդան Մամիկոնյանի և այլ նախարարների հետ մեկնել է Տիզբոն և տեսել ու լսել պարսից Հազկերտ Բ թագավորին: Այնուհետև մասնակցել է Վարդանանց պատերազմին:

Պատերազմից հետո, իբրև մենակյաց-ճգնավոր, առանձնացել է Մոկաց լեռների մի քարայրում, որը հետագայում կոչվել է Եղիշեի այր: Մահացել է 470-ական թվականների սկզբին: Գերեզմանը գտնվում է Վանա լճի ափին, բարձր ու ծաղկավետ Արտոս լեռան լանջին կառուցված Չաղար Սուրբ Աստվածածին վանքում, որ հայտնի է եղել նաև պատմիչի անունով:

Եղիշեի լավագույն ստեղծագործությունն է «Վասն Վարդանայ և հայոց պատերազմի» («Վարդանի և հայոց պատերազմի մասին») երկը: Ո՞րն է այս ստեղծագործության պատմական հիմքը:

Վերացնելով Արշակունյաց թագավորությունը և Հայաստանը կիսանկախ մարզպանական երկրի վերածելուց հետո՝ Պարսկաստանը ձգտում է վերացնել նաև Հայոց ներքին ինքնավարությունը և հայության մեջ բռնությամբ տարածել պարսկական կրոնը: Հատկապես Հազկերտ Բ-ի օրոք չափազանց ծանրանում է Հայաստանի վրա դրված հարկային լուծը, սահմանափակվում կամ վերացվում են հայ նախարարների իրավունքները: Հազկերտն առանձին հրովարտակով առաջարկում է հայերին հրաժարվել քրիստոնեությունից և ընդունել զրադաշտականություն: Հայ աշխարհիկ և հոգևոր տերերը, սակայն, մերժում են այդ առաջարկը, համախմբվում են սպարապետ Վարդան Մամիկոնյանի շուրջը և ապստամբում պարսից բռնակալության դեմ: Նրանք սպարապետին ընտրում են երկրի տեր (Հայոց տանուտեր)՝ գերադասելով մարզպան Վասակ Սյունիից, որը դեմ էր ապստամբությանը:

451 թվականի մայիսի 26-ին Տղմուտ գետի ափին հայկական զորքը վճռական հակահարված է տալիս թշնամուն: Թեև ճակատամարտի ժամանակ շատերի հետ հերոսաբար զոհվում է նաև Վարդան Մամիկոնյանը, բայց պարսից արքունիքն այդ ահեղ դիմադրությունից հետո ստիպված է լինում ետ քաշել իր զորքերը, հրաժարվել հավատափոխության ծրագրից, թեթևացնել հարկերը և ճանաչել մարզպանական Հայաստանի ներքին ինքնավարությունը:

Այս պատմական իրողությունն է առաջին անգամ և բավական մանրամասնորեն ներկայացնում Եղիշեի երկը: Այն պատմական հավաստի սկզբնաղբյուր է, միաժամանակ նաև՝ ոգեշունչ հայրենասիրական-ազգասիրական զգացումներով համակված գեղարվեստական ստեղծագործություն: Գրված է հարուստ լեզվով,

ճոխ պատկերներով և համեմված է իմաստուն ասույթներով: Պատմիչը ստեղծել է բազմաթիվ հուզիչ տեսարաններ, գեղեցիկ նկարագրություններ: Ուստիև այս երկը համարվել է վկայաբանական բնույթի պատմական դյուցազներգություն ու ողբ, իսկ նրա հեղինակը կոչվել է Ոսկեբերան:

Որպես ականատես-պատմիչ՝ Եղիշեն իր Պատմությունը սկսում է՝ ասելով. «Ահա, կամքիս հակառակ, արտասվալից ողբերով շարադրում ենք այն բազմաթիվ հարվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»:

Իր այս Մատյանը հեղինակը համարել է «սիրելիների համար մխիթարություն, հուսացողներին՝ հույս, քաջերին՝ քաջալերություն, որոնք հոժարակամ հարձակվում են մահվան վրա»:

Ագաթանգեղոսի և Փավստոս Բուզանդի նման, Եղիշեն ևս ձգտել է քարոզել ու գովաբանել քրիստոնեական կրոնն ու առաքինությունները, կրթել հայրենյաց հավատին ու հայրենիքին նվիրված սերունդներ:

Պատմիչի համոզմամբ՝ բոլոր չարիքները բխում են անգիտությունից, ուսման պակասից: Այդ համոզմունքից էլ ծնվել է նրա իմաստուն ասույթներից մեկը. «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով»: Կույրը զրկված է արևի լույսից, իսկ անգետը՝ կատարյալ կյանքից: Եթե մարդը խավարամիտ է, ապա թուլանում է նրա հոգին, սաստիկ երկյուղի մեջ է ընկնում, վախենում է ամեն ինչից, հատկապես՝ մահից: Ով գիտի, թե ինչի համար է մեռնում, նա չի վախենում մահից: Եվ Եղիշեն առաջ է քաշում իր մյուս կարևոր գաղափարը. «Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»: Այս ասույթի մեջ է պատմիչը խտացրել Վարդանանց պատերազմի ամբողջ գաղափարախոսությունը: Հայ մարտիկներն ինքնակամ և գիտակցաբար գնում են մահվան, քանի որ գնում են պաշտպանելու հայրենի երկիրն ու հայրենյաց հավատը և այդպիսով՝ անմահանալու:

Մյուս կարևոր գաղափարը, որ արծարծել է Եղիշեն, այսպես է ձևակերպված. «Միաբանությունը բարի գործերի մայրն է, անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»:

Ինչպես տեսանք, Փավստոս Բուզանդն արդեն առաջ էր քաշել ազգային միաբանության գաղափարը, քանի որ հայ ժողովրդի պատմության փորձը ցույց է տալիս, որ միաբանությամբ, «հավաքական ուժով» միայն կարելի է պաշտպանել ու պահպանել հայրենիքը: Այդ գաղափարը, որ կենսունակ է նաև այսօր, առավել կարևորել է Եղիշեն՝ ասելով. «Ամեն մի տուն և թագավորություն, որ բաժանվում է ինքն իր մեջ, հաստատուն մնալ չի կարող»: Ուստիև նա Վարդանի, իշխանների, հոգևորականության ու ժողովրդի համագործակցությունը կոչում

է «միաբանության սուրբ ուխտ»:

Պատմիչի գաղափարների հիմնական կրողը Վարդան Մամիկոնյանն է, նրա երկի կենտրոնական կերպարը: Հետաքրքիր է, որ Եղիշեն ոչ մի տեղ իր այս հերոսի նկարագիրը չի կատարում, այլ միայն կոչում է նրան քաջ, կորովի և մեծ մակդիրներով: Սակայն Մատյանի ողջ շարադրանքից հառնում է սպարապետի հերոսական կերպարը: Նա անվեհեր և հաստատակամ դյուցազուն է, հմուտ ռազմագետ՝ անմնացորդ նվիրված հայրենիքին ու հայրենյաց հավատին: Նա չի վախենում և թերահավատությամբ չի լցվում նույնիսկ այն ժամանակ, երբ երկպառակվում է երկիրը, նա դիմում է իմաստուն գործողությունների՝ իր բոլոր քայլերը կշռադատելով և խորհրդակցելով այլոց հետ:

Իբրև քրիստոնյա ասպետ և գաղափարական մարտիկ՝ Վարդանը հանդես է գալիս հատկապես վճռական ճակատամարտից առաջ իր զորաբանակի առջև ճառ արտասանելիս: Նա հիշում է, թե ինչպես բազում հաղթական պատերազմներ է մղել օտար տիրոջ համար, բայց այժմ հասել է ժամը, երբ պետք է կռվել սեփական երկրի և Աստծո համար: Նա խնդրում է իր ռազմիկներին չվախենալ թշնամու բազմությունից, քանի որ վախը թերահավատության նշան է. պետք է անվախ մարտնչելով՝ հաղթել կամ էլ նահատակվել սուրբ մահով:

Թերահավատությունն ու վախը հաղթահարած և դեպի գիտակցված մահ գնացող Վարդանը, ինչպես իր հայրենասիրությունը, այնպես էլ ռազմական հմտությունն ապացուցում է՝ մարտի դաշտում անձնուրաց կռվելով և ստանալով «կատարյալ նահատակության պսակը»: Նրա քաջագործությունները ոգեշունչ հիացմունքով է պատկերել ճարտասան-պատմիչը...

Փայլուն կերպարաշար են ներկայացնում Վարդանանք՝ հայրենիքի համար անձնվեր մարտնչող նախարարները, իշխանազուններն ու հոգևորականները, որոնք ապացուցում են, որ «մահը մեռնում է մահով»:

Մի հավաքական կերպար է ներկայացնում նաև իր ազատության համար ոտքի ելած ժողովուրդը՝ աշխարհազորը. «Միևնույն հոժար սիրտն ունեին բոլորն էլ՝ տղամարդ ու կին, ծեր ու տղա»: Նրանք էլ հերոսի ու նահատակի սուրբ պսակ են կրում, քանի որ «իրենց կյանքը մահ էին համարում, իսկ մահը՝ հավաստի կյանք»:

Եղիշեն Վարդան Մամիկոնյանին հակադրել է Վասակ Սյունիին՝ ստեղծելով դավաճանի մի խիստ բացասական կերպար: Նա, անշուշտ, տուրք է տվել եկեղեցականության միակողմանի դիրքորոշմանը և հակավասակյան հոսանքի տեսակետին: Մինչդեռ Վասակ Սյունին դավաճան չէր: Նա, ելնելով դիվանագիտական հաշվարկներից, ընդամենը դեմ է եղել պարսից հզոր

տերության դեմ կազմակերպվող ապստամբությանը: Նշենք, որ Կորյունը նրան համարել է հայրենյաց հավատի քաջ պաշտպան և հետևորդ, ինչպես նաև «խելացի ու հանճարեղ և կանխագետ, աստվածային իմաստության շնորհով օժտված մարդ»: Ազգային միաբանության քարոզիչ Եղիշեին կարելի է համաձայնել այն առումով, որ երբ ժողովուրդն իր ազատության համար կանգնում է ոտքի, բոլորը, մարզպան թե սպարապետ, կաթողիկոս թե իշխան, անկախ քաղաքական դիրքորոշումից, պիտի սատարեն նրան...

Եղիշեն դիպուկ մակդիրներով ու տպավորիչ համեմատություններով է պատկերել պարսից արքա Հազկերտի կերպարը: Նրան համարել է թունավոր նետերով լի կապարճ, կատաղի գազան, չար դև: Նա նման էր ալեկոծված ծովի, որը փրփրում էր խոր անդունդներից և ոչնչացնելու համար սփռվում էր լեռների, ձորերի ու ծաղկավետ դաշտերի վրա: Նա որոտում էր վիշապաձայն, «մերթ շանթում, գալարվում էր ինչպես թունավոր օձ, մերթ ձգվում, մռնչում էր ինչպես զայրացած առյուծ», և նրա քթից ու բերանից ջերմախառն գոլորշի էր դուրս գալիս, ինչպես հնոցից՝ թանձր ծուխը:

Եղիշեն նաև տարբեր իրողությունների տպավորիչ նկարագրությունների վարպետ է: Նրան հաջողվել է պատկերել ժողովրդական ապստամբության ժամանակ երկրում տիրող շիկացած մթնոլորտը: Մանուկներն անգամ խիզախում էին պատերազմող տղամարդկանց նման, և նույնիսկ աստղերը երկնքում սովորականից ավելի լուսավոր ու պայծառ էին երևում: Ամենուրեք հնչում էր «Միայն թե քաջությամբ մեռնենք» համընդհանուր իղձը:

Մի գունագեղ ու կենդանի մարտանկար է Ավարայրի ճակատամարտի նկարագրությունը, որից քաղված է հետևյալ դրվագը. «Երկու կողմերի աղմուկն ու աղաղակը ճայթում էին ինչպես իրար խառնված ամպերի միջից, և ձայների դղրդյունը շարժում էր լեռների քարանձավները: Բազմաթիվ սաղավարտներն ու զրահապատված զորականների զենքերը փայլում էին ինչպես արևի ճառագայթների շողեր: Նաև բազմաթիվ սուսերների շողալուց և բազմախուռն նիզակների ճոճվելուց կարծես ահագին կրակ էր թափվում երկնքից»:

Պատմիչը բավական ազդեցիկորեն նկարագրել է նաև պատերազմից հետո իրենց հարազատ բնակավայրերը լքող ժողովրդի տխուր վիճակը. «Հարսները դուրս եկան առագաստներից, և փեսաները՝ սենյակներից, ծերերն իջան աթոռներից, և երեխաները՝ ծնողների գրկից... նրանց մրմունջներն ու երգերը սաղմոսներն էին, և ամեն մարդ ինքն իր մեջ եկեղեցի էր»:

Առաջին անգամ մեր մատենագրության մեջ հնչում է հայրենասերի ողբը: Այդ հնչերանգով է պատմիչը պատկերում այն բազմաթիվ ծանր հարվածները,

որ կրեց հայ ազգը: Այդ ողբն ավելի է սաստկանում, երբ ջլատվում է հայոց միաբանությունը, որը պատմիչը համեմատում է անդամահատվող մարմնի հետ...

Եղիշեի ողբը, սակայն, հուսահատ չէ և ողողված է լավատեսությամբ: Դա բնորոշ է նաև ամբողջ հայ ողբասացությանը և, առհասարակ, հայ ժողովրդի հոգեկան կերտվածքին ու մտածելակերպին: Եղիշեի Մատյանն ավելի շատ տոգորված է ազատագրական պայքարի խանդավառությամբ:

Միաժամանակ ողբական ու հերոսական բնույթ ունի Պատմության վերջին դրվագը, որտեղ հեղինակը պատմում է նահատակ հայ իշխանների կանանց մասին: Հայոց փափկասուն տիկնայք համբերությամբ և արժանապատվությամբ են կրում իրենց բաժին հասած բոլոր զրկանքները: Այս ընդարձակ դրվագը մի հուզիչ գեղարվեստական պատկեր է, ոգեշունչ գովերգություն՝ նվիրված հայ կանանց, որոնք հավատարիմ էին մնացել իրենց քաջարի ամուսիններին, իրենց հայրենիքին ու հայրենյաց հավատին:

Այդ դրվագը, և, առհասարակ, Եղիշեի ամբողջ Պատմությունը, պետք է կարդալ հեղինակի ոսկեղենիկ հայերենով՝ հաղորդակցվելու համար այդ գործի ողջ գեղեցկությանն ու հայրենասիրական ջերմ զգացումին: Այս հայաշունչ Մատյանը, իսկապես, մի հերոսական բանաստեղծություն է, ազատասիրության ու ազգասիրության մի հրաշալի դասագիրք, որը դարեր շարունակ պայքարի ոգով է կրթել հայ մարդու հոգին:

Հարցեր և առաջադրանքներ

1. Ե՞րբ և որտե՞ղ է ծնվել և ի՞նչ կրթություն է ստացել Եղիշեն:
2. Ներկայացրեք ձեր ուսումնասիրած պատմիչների կենսագրությունը և գործունեությունը՝ ըստ փաստերի և հուշագրության:
3. Ներկայացրեք պատմիչ Եղիշեի ստեղծագործությունը՝ ըստ դասագրքում ներկայացված նյութի տրամաբանական հաջորդականության:
4. Գնահատեք Եղիշեի թողած գրական ժառանգությունը որպես ազգային արժեք՝ բերելով ասածը հիմնավորող փաստեր:
5. Ո՞րն է Եղիշեի Պատմության պատմական հիմքը: Ասածները հիմնավորե՛ք փաստերով:
6. Ի՞նչ պատմական իրողություն է առաջին անգամ և բավական մանրամասնորեն ներկայացնում Եղիշեն իր երկով:
7. Ինչո՞ւ է Եղիշեն իր Պատմությունը սկսում՝ ասելով. «Ահա, կամքիս հակառակ, արտասվալից ողբերով շարադրում ենք այն բազմաթիվ հարվածները, որոնց մեջ հենց մենք էլ ընկանք՝ ականատես լինելով»:
8. Ինչո՞ւ է իր Մատյանը հեղինակը համարել «սիրելիների համար մխիթարություն,

հուսացողներին՝ հույս, քաջերին՝ քաջալերություն, որոնք հոժարակամ հարձակվում են մահվան վրա»:

9. Մեկնաբանեք այս ասույթների իմաստը. «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով: Կույրը զրկված է արևի լույսից, իսկ անգետը՝ կատարյալ կյանքից: Եթե մարդը խավարամիտ է, ապա թուլանում է նրա հոգին, սաստիկ երկյուղի մեջ է ընկնում, վախենում է ամեն ինչից, հատկապես՝ մահից: Ով գիտի, թե ինչի համար է մեռնում, նա չի վախենում մահից: Չգիտակցված մահը մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»:
10. Ո՞ր ասույթի մեջ է պատմիչը խտացրել Վարդանանց պատերազմի ամբողջ գաղափարախոսությունը:
11. Մեկնաբանեք Եղիշեի այս ձևակերպումը. «Միաբանությունը բարի գործերի մայրն է, անմիաբանությունը՝ չար գործերի ծնողը»: Մեր ուսումնասիրած պատմիչներից ո՞վ է այս գաղափարը արծարծել:
12. Թվարկեք Եղիշեի Պատմության գլխավոր կերպարները:
13. Ո՞վ է պատմիչի գաղափարների հիմնական կրողը և նրա երկի կենտրոնական կերպարը: Ինչո՞ւ:
14. Ներկայացրեք Վասակի և նրա համախոհների կերպարները և վերլուծեք՝ ներկայացնելով նրա արարքների շարժառիթները:
15. Ներկայացրեք Հազկերտի կերպարը և վերլուծեք՝ ներկայացնելով նրա արարքների շարժառիթները:
16. Մեկնաբանեք՝ ինչպես էին հայոց փափկասուն տիկնայք համբերությամբ և արժանապատվությամբ կրում իրենց բաժին հասած բոլոր զրկանքները: Գնահատեք նրանց արարքը:

Կորյունը և «Վարք Մաշտոցի» երկը

Հայ մատենագրության հիմնադիր, մեծ հայրենասեր Մեսրոպ Մաշտոցի կրտսերագույն աշակերտին է բախտ վիճակվում առաջին անգամ գրել աշխարհիկ բնույթի պատմական բովանդակությամբ երկ: Պատահական չէ, որ պատմական այդ առաջին երկը նվիրված է հենց հայ ժողովրդի հոգեւոր ազատության ամենահզոր զենքի, նրա ընդհանուր համազգային [1] միասնության ամենամեծ պատմական-մշակութային գործոնի՝ հայ գրի ստեղծման պատմությանը:

Մաշտոցի այդ երախտապարտ աշակերտը Կորյուն վարդապետն էր, հայ պատմագրության առաջնեկը [2] : Կորյունի գրած առաջին ինքնուրույն պատմական երկը, որ մեզ է հասել, կրում է «Պատմութիւն վարուց եւ մահուան առն երանելւոյ սրբոյն Մաշտոցի վարդապետի մերոյ թարգմանչի ի Կորիւն վարդապետէ յաշակերտէ նորին» խորագիրը [3] :

Մաշտոցի մահից հետո (440) Կորյունը մտածում է ձեռնարկել այդ գործը, եւ հենց այդ ժամանակ նա հրաման է ստանում Մաշտոցի աշակերտ, կաթողիկոսական տեղապահ Հովսեփ Հողոմցուց գրելու իրենց ուսուցչի

կենսագրությունը եւ գրերի ստեղծման պատմությունը: Կորյունը քաջալերվելով նաեւ Մաշտոցի մյուս աշակերտների կողմից, գրում է իր երկը եւ ավարտում է ոչ վաղ, քան 443 թվականը [4] :

Դրանով Մաշտոցի երախտապարտ աշակերտները անմահացրել են իրենց ուսուցչի անունն ու կատարած գործը, գրավոր հուշարձան են ստեղծել ու թողել հետագա սերունդներին:

Հայ քաղաքական ու մշակութային կյանքի այդ հեղափոխիչ իրադարձության սկզբնական պատմության ամենավստահելի աղբյուրը Կորյունի երկն է:

Նա նշում է, որ ինչ-որ գրել է, ոչ թե հին զրույցներից է տեղեկացել եւ շարադրել, այլ ինքը հենց ականատես է եղել նրանց գործունեությանը եւ մասնակցել հոգեւոր գործերին: «Ոչ թե սուտապատում ճարտարախոս լինելով մեր խոսքերով՝ իմ հոր մասին կարգեցինք (այս), այլ շատը թողնելով եւ նշանավոր գիտակներից քաղելով այս, համառոտը գրեցինք» [5] :

Կորյունը տվել է հայ, վրաց եւ աղվան գրերի ստեղծման, հայ մատենագրության սկզբնավորման, առաջին հայ թարգմանիչների գործունեության, հայերեն լեզվով ուսումնական գործի կազմակերպման, հայ ժողովրդի բոլոր խավերի ոգեւորության եւ ակտիվ աջակցության ու գործակցության, հեթանոսության ,, ե աղանդների դեմ պայքարի պատմությունը՝ կապված Մեսրոպ Մաշտոցի ծավալած գործունեության հետ:

Կորյունի երկը ներբողյան է՝ գրված համապատասխան կառուցվածքով եւ հորինման կանոններով:

«Վարք Մաշտոցի» հեղինակի մասին կենսագրական տեղեկությունների միակ աղբյուրը հենց ինքը Կորյունն է: Նա հայտնում է, որ բախտ է ունեցել լինելու Մաշտոցի կրտսերագույն աշակերտը եւ «ընտանեգոյն սննդակիցը» Եզնիկ Կողբացու, այլ խոսքով, մանկության ժամանակ ուսումնակիցն է եղել ու մեծացել է Եզնիկի հետ [6] :Կորյունի ծննդյան թիվը հայտնի չէ: Ելնելով այն բանից, որ նա Կոնստանդնուպոլսից հայրենիք վերադարձած պետք է լիներ 431 թվականից հետո, քանի որ հետը բերել էր այդ թվականին կայացած Եփեսոսի եկեղեցական ժողովի կանոնները, եւ նրանից, որ այդ ժամանակ Հայաստանից արտասահման էին ուղարկում սովորելու եւ կատարելագործվելու սովորաբար 3-5 տարի ժամանակով, կարելի է ենթադրել, որ Կորյունը Պոլիս է գնացել 427-428 թվականներին եւ այդ ժամանակ նա արդեն պետք է որ հասուն երտասարդ լիներ, մոտ 22-25 տարեկան: Հետեւապես ծնված պետք է լիներ մոտավորապես 400-405 թվականների ժամանակահատվածում [7]:

Կորյունն սկզբնական կրթությունն ստացել է Վաղարշապատում: Ձեռք

բերելով համապատասխան գիտելիքներ, նրան եւ շատ ուրիշների ուղարկել են գավառները ուսուցչական աշխատանքի:

«…Սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանչացն Քրիստոսի գործել, գումարել ի կողմանս, ի գաւառս, ի տեղիս Հայաստան ազգին, դասս դասս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհասուցելոցս ի կատարումն գիտութեան, բաւականս եւ առ ի զայլսն զեկուցանելոյ» [8], -գրում է Կորյունը:

Սահակ Պարթեւը եւ Մեսրոպ Մաշտոցը մեծ հոգատարություն են ցուցաբերել աչքի ընկած իրենց աշակերտների նկատմամբ: Նրանցից շատերին ուղարկել են ժամանակի գիտության նշանավոր օջախները՝ սովորելու եւ գիտությունների մեջ կատարելագործվելու: Մեծ երախտավորների նման վերաբերմունքը, հասկանալի է, թելադրված էր այն մեծ գործի շահերից, որ ձեռնարկել էին նրանք. աստվածաբանական գրականության թարգմանությունը պահանջում էր կարճ ժամանակում պատրաստել համապատասխան, հմուտ թարգմանիչներ ու մեկնաբաններ:

Սահակի եւ Մաշտոցի այդպիսի բախտավոր աշակերտներից էր նաեւ Կորյունը: Վաղարշապատում հոգեւոր կրթություն ստանալուց հետո, հավանաբար նրան տրվել է վարդապետի կոչում եւ նա զբաղվել է, ինչպես ինքն է վկայում, ուսուցչությամբ եւ քարոզչությամբ: Որոշ ժամանակ անց, մի քանի , եղբայրներիե (հոգեւորականների — Լ. Բ.) հետ նրան եւս ուղարկել են Կոստանդնուպոլիս՝ թարգմանչական աշխատանքի համար: Այնտեղ նրանք հանդիպել են Եզնիկ Կողբացուն իբրեւ «ընտանեգոյն սննդակցի»: Մի քանի տարի մնալուց հետո վերադարձել են հայրենիք, հետները բերելով Աստվածաշնչի ստույգ օրինակները եւ այլ ձեռագրեր, որոնց թվում նաեւ Նիկիո եւ Եփեսոսի եկեղեցական ժողովների կանոնները: Վերադառնալուց հետո, Կորյունը, հավանաբար, Վաղարշապատում շարունակել է թարգմանչական ու ստեղծագործական գործունեությունը եւ հոգեւոր ծառայությունը:

Ն. Ադոնցը հենվելով լատին պատմիչ Լիբերատի եւ 5-րդ տիեզերական ժողովի արձանագրությունների մեջ պահպանված մի հիշատակարանի տվյալների վրա, ենթադրում է, որ եփեսոսյան դավանանքի հաղթանակից հետո հայերը առանձին հանձնարարականով վերստին պատգամավորություն են ուղարկել Կ. Պոլիս՝ Պրոկլ պատրիարքին [9]: Ադոնցը հավանական է համարում նաեւ, որ Լիբերատի վկայության մեջ նշված 2-3 անձնավորությունները եղել են Կորյունի նշած Ղեւոնդը, Կորյունը եւ Եզնիկ Կողբացին [10], եւ գտնում է, որ Կորյունի «Միաբանութեամբ հոգեւոր պիտոյից զխնդիրն վճարելե արտահայտությամբ գուցե խուլ ակնարկ է եւ ընդհանուր բնորոշում այն հանձնարարության, որի

մասին խոսել ի լուր աշխարհի անպատեհ է համարում մեր պատմիչը» [11]:

Մաշտոցի մահից հետո, ինչպես ասվեց, Կորյունը ձեռնարկել է գրելու իր երկը: Այդ գործին նա մեծ երկյուղածությամբ է վերաբերվել, քանի որ ժամանակը եւ երկրում ստեղծված պայմանները նպաստավոր չէին: Պարսկական արքունիքը իրականացրել էր իր վաղեմի նպատակը, վերացված էր հայոց թագավորությունը, 430-ական թվականներին հայ եկեղեցու բարձր դիրքերը գրավել էին ասորի հոգեւորականները, որոնք հովանավորում էին պարսկական արքունիքի կողմից եւ թշնամաբար էին տրամադրված Սահակի եւ Մաշտոցի ու նրանց աշակերտների ծավալած գործունեության նկատմամբ, Սահակը զրկվել էր կաթողիկոսական աթոռից:

Ասորի հոգեւորականները շատ լավ էին հասկացել, որ հայերի կողմից ծավալած թարգմանչական գործունեությունը եւ հայերեն լեզվով ուսուցման գործի կազմակերպումը ուղղված էր հենց ասորական ազդեցության ու ասորերեն լեզվի դեմ: Այդպիսի պայմաններում գրել ու գովաբանել հայ գրերի ստեղծողին, բավական դժվար ու համարձակ գործ էր: Լավ գիտակցելով այդ, մեր պատմիչն իր նպատակը իրագործելու համար ելք է գտնում: Առաջին համառոտ ու անհրաժեշտ առաջաբանից հետո, մի երկրորդ ընդարձակ առաջաբան է գրում, ուր Աստվածաշնչից շատ մեջբերումներ է անում, հիմնավորելու համար, որ ոչ միայն թույլատրելի է, այլեւ անհրաժեշտ է Մաշտոցի կենսագրությունը գրել ուրիշներին իբրեւ օրինակ ծառայելու համար:

Չէ որ աստծու՝ Մովսեսին տված բարձր պատգամներից մեկն էլ բոլոր եղած բաների մասին մատյանի մեջ գրելն էր՝ գալիք հավիտենականությանը պահ տալու համար [12] :

Կորյունը ցույց է տալիս, որ Սահակի եւ Մաշտոցի ծավալած գործունեությունը եւ հատկապես Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը թույլատրված է ոչ միայն մարգարեների, այլեւ հենց Հիսուսի կողմից:

Չէ որ Դավիթը հայտնի կերպով ցույց է տվել, որ աստվածատուր օրենքը պիտի վիճակվի բոլոր ազգերին, ասելով թե՝ «պիտի գրվի ուրիշ ազգերի համար» եւ թե «տերը գրքով պիտի պատմի ժողովուրդներին» [13] :

Չէ որ աստվածն է պատվիրել թե՝ այս ավետարանը պիտի քարոզվի ամբողջ տիեզերքում [14] :

Խոսելով Պողոս առաքյալի 14 թղթերի մասին, ուր նա պատմում է իր առաքելակիցների եւ գործակիցների մասին, Կորյունը գրում է, որ այս ամենը նա հռչակել է ոչ թե գովքի ու պարծամքի համար, այլ որպեսզի օրինակ եւ կանոն ծառայի հետո եկողներին: Որպեսզի ամենքը նախանձավոր լինեն նման

բարի գործերի [15] :

Կորյունն էլ Սահակի եւ Մաշտոցի գործունեության մասին պատմում է ոչ ի պատիվ աստծու սրբերի, որոնք ամենապայծառ հավատով ու վարքով ճանաչված՝ հարգվել էին, այլ ի քաջալերիչ օրինակ իրենց հոգեւոր զավակների եւ այն ամենքին, որ նրանց միջոցով աշակերտելու են սերնդե սերունդ [16] :

Եվ կարծես մի տեսակ հանգստացած ու իրեն արդարացնելու նպատակով , առաջաբանը վերջացնում է. «Եվ այսպես ուրեմն՝ երկուսից էլ [17] թույլտվություն ենք ստացել նաեւ արդար մարդու վարքը գրի առնելու» [18] :

Պատահական չէ, որ Կորյունը շեշտը դրել է Մաշտոցի հոգեւոր գործունեության վրա, չի շոշափել ժամանակի քաղաքական, եկեղեցական հարցերը, խուսափել է այն ամենից, ինչ կարող էր զայրացնել իրենց հակառակորդներին: Ընդհակառակը, ամեն կերպ աշխատել է ցույց տալ ու շեշտել, որ Մաշտոցին հայ գրերի ստեղծման գործում լայն աջակցություն եւ հովանավորություն են ցույց տվել ասորի եւ հույն նշանավոր հոգեւորականները, որ նրանք անչափ ուրախացել են Մաշտոցի հայտնագործությամբ, չնայած իրականում, իհարկե, այդպես չի եղել: Ավելին, Կորյունը նշել է, որ Մաշտոցից առաջ հայ գրերի ստեղծման գաղափարը հղացել է մի ասորի հոգեւորականի մոտ եւ ոչ հայի: Այդ բոլորով նա ձգտել է հասկացնել ասորի եւ հույն հոգեւորականության, որ նրանք օրինակ վերցնեն իրենց անվանի նախորդներից, հետեւեն նրանց եւ նույնպես բարյացակամ լինեն հայ դպրության ու նրա ստեղծողի նկատմամբ:

Այս իմաստով սխալվում է Ն. Ադոնցը՝ անվերապահորեն հայտարարելով, թե Կորյունի «գործը հակաասորական կնիք, նեստորական խորշանք ունի», որ «Ասորական նպաստը գրերի գյուտում դիտմամբ սքողված է նրա գրչի տակ» [19] :

Ներքուստ ասորի հոգեւորականության նկատմամբ ատելությամբ լցված պատմիչը այն պայմաններում չէր կարող հակաասորական կնիք կրող գործ ստեղծել: Կորյունի նպատակը բոլորովին այլ է եղել: Ինչպես միանգամայն ճիշտ նկատում է Մ. Աբեղյանը, Կորյունը խուսափել է անգամ ասորի բառը օգտագործել [20] : Ամբողջ երկում երկու անգամ է հիշված այդ բառը, այն էլ մեծ համակրանքով: Առաջին անգամ՝ ասորի Դանիել եպիսկոպոսի մոտ տառեր գտնելու առնչությամբ, երկրորդ անգամ՝ Եդեսիայի եւ Ամիդի եպիսկոպոսների Մաշտոցին ցույց տված մեծ պատվի ու օժանդակության կապակցությամբ:

Կորյունի երկում Նեստորի անունն անգամ չկա, իսկ նրա ուսուցչի՝ Թեոդոր Մոպսուեստացու մասին գրվածն էլ բավական զուսպ է. այդ մասին

քիչ հետո: Հետեւապես այն «նեստորական խորշանք» էլ չունի: Ն. Ադոնցի նման հետեւության է հանգել, հավանորեն, թեոդորական-նեստորականների եւ հականեստորականների պայքարի մասին օտար աղբյուրների տվյալների ազդեցության տակ եւ ոչ Կորյունի երկից ելնելով. Կորյունի երկը նման եզրակացության հիմք չի տալիս:

Կորյունը զգուշացել է մեծ երախտավորի բոլոր գործերի մասին գրելու: Այդ կապակցությամբ նա ասում է, որ ինքը չէր կարող դիմանալ նրանց յուրաքանչյուրի բոլոր արածները գրի առնելու. ուստի պատսպարվել է այդ ավելի հեշտ ու դյուրինով-առաքելականով [21] : Այսպես վարվելու պատճառը իբր թե այն է, որ նա սրբերի բազմախառն վաստակները թողել է, որպեսզի մանրամասնորեն պատմի կարեւորագույն հանգամանքները [22] :

Իսկական պատճառը, իհարկե զգուշությունն էր եւ ոչ թե կարեւորագույն հանգամանքները մանրամասն պատմելը:

Մ. Աբեղյանն այդ կապակցությամբ միանգամայն դիպուկ նկատում է, որ իսկապես Կորյունը պատսպարվել է Աստվածաշնչից բերած բազմաթիվ մեջբերումների ետեւում [23] :

Միանգամայն տեղին է Մ. Աբեղյանի կշտամբանքը Նորայր Բյուզանդացու նկատմամբ, այն բանի համար, որ վերջինիս կարծիքով Կորյունի երկրորդ առաջաբանը ավելորդ է: «Այդ նշանակում է, - գրում է անվանի գիտնականը, - չհասկանալ Կորյունին եւ նրա ժամանակը» [24]: Այդ առաջաբանը ուղղված է Մաշտոցի եւ նրա աշակերտների հակառակորդների դեմ: Ժամանակները փոխվել էին: Իր մեծ հեղինակությամբ, նշում է Մ. Աբեղյանը, ինչպես վկայում է Կորյունը, Մաշտոցը զսպել էր հակառակորդներին [25] :

Սակայն Սահակի ու Մաշտոցի մահից հետո, այդ հակառակորդներն ավելի էին ակտիվացել ու հալածանքներ սկսել նրանց աշակերտների ու նրանց ծավալած գործունեության դեմ: Գրելով այդ առաջաբանը, Կորյունը կատարել է ժամանակի պահանջը եւ, ինչպես ճիշտ նկատում է Մ. Աբեղյանը, այդ առաջաբանն է, որ հնարավորություն է տալիս այսօր պատկերացում կազմելու այն ժամանակի ոգու եւ դրության մասին [26] :

Բանասեր Կ. Քիպարյանը, նույնպես ճիշտ գնահատելով երկը եւ նշելով, որ Կորյունի գիրքը, «Իբր պատմութիւն շատ քիչ բան կը ներկայացնե», այնուհանդերձ գտնում է, որ «...գրերու գիւտի պատմութեան միակ ականատես եւ անզուգական վկան է եւ այս տեսակետով գիրքը շատ թանկագին է» [27] :

Այս իմաստով չի կարելի համաձայնվել նաեւ Ն. Ադոնցի հետ, ըստ որի «... Մաշտոցի կենսագիրը շատ հեռու է բավարարելու այն պահանջներին, որ կարելի

է առաջադրել մի աշակերտի, որ գրում է իր ուսուցչի կյանքը: Կորյունը որքան ճոռոմաբան, նույնքան սակավագետ է: Գուցե եւ ավելի գիտե, քան հայտնում է մեզ: Խոստումնալից առաջաբանը, ուր ուզում է նավել «զհամատարած ալեօքն վարդապետական ծովուն» նման է շքեղ մուտքի, որ տանում է մի խեղճ տնակ: Ուստի եւ վերջաբանությունը, ուր հայտարարում է, որ «ոչ եթէ ի հին համբաւուց տեղեկացեալ» մատենագրում է, «այլ յորոց մեր իսկ ականատես եղեալ», թողնում է բոլորովին հակառակ տպավորություն» [28] :

Նման հարցադրումը, Մ. Աբեղյանի խոսքերով ասած, նշանակում է չհասկանալ Կորյունին եւ նրա ժամանակը:

Տարօրինակ է, սակայն, որ Ն. Ադոնցն այդ բառերից հետո գրում է. «Կորյունը հասարակ կենսագիր չէ, նա կեղեցական գործիչ է եւ իբր այդպիսին պետք է իր գրիչը համակերպեր հետ-եփեսոսյան տրամադրության» [29] : Այլ խոսքով՝ ժամանակին:

Ավելին, Ն. Ադոնցը գտնում է, որ Կորյունը որոշ հարցերի մասին անպատեհ է համարել «խոսել ի լուր աշխարհի» [30], որ Կորյունը հանդես է բերել «ծածկամտություն» [31] եւ այլն:

Հ. Մանանդյանը ելնելով Ն. Ադոնցի վերոհիշյալ եզրակացությունից, գտնում է, որ «...Կորյունի տեղեկությունների մեջ եղած թերությունները, անորոշությունները եւ անգամ աղավաղումները կարող են բացատրվել ոչ միայն ուշ շրջանում այդ աշխատության խմբագրական վերամշակմամբ, այլեւ մասամբ հենց իր՝ հեղինակի դավանական նկատառումներով, դեպքեր նկարագրելով կրոնական փոփոխված տրամադրություններին համապատասխան V դարի երկրորդ քառորդում» [32] :

Ըստ Ն. Ադոնցի, այդ տրամադրություններին համակերպվելու պատճառով է, որ Կորյունը սքողել է Մաշտոցի՝ Ամիդ, Եդեսի կատարած ուղեւորության բուն նպատակը:

Հենվելով լատին պատմիչ Լիբերատի վկայությունների վրա, Ն. Ադոնցը գտնում է, որ Մաշտոցը, սկզբնական շրջանում մոտ հարաբերությունների մեջ է եղել Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու հետ, նամակագրական կապեր է ունեցել եւ շատ հավանական է համարում, որ Կորյունը լինելով հականեստորական, այնուամենայնիվ, հաշվի առնելով այդ հանգամանքը, խուսափել է այդ մասին գրել եւ Մաշտոցի առնչությամբ Թեոդորոսի անունը տալ [33] : Նկարագրելով Մաշտոցի ճանապարհորդությունը Ամիդ, Եդեսիա, Սամոսատ, Կորյունը գրում է, որ վերջինում «...Մեծապատիվ կերպով մեծարվեց եպիսկոպոսից եւ եկեղեցուց» [34] : Սակայն Սամոսատի այդ

եպիսկոպոսի անունը պատմիչը չի նշում, այն դեպքում, երբ Ամիդի եւ Եդեսիայի եպիսկոպոսների անունները տրվում է: Այստեղից Ն. Ադոնցը եզրակացնում է, որ դրա պատճառը այն է, որ Սամոսատի՝ Անդրեաս Սամոսատցին, հայտնի նեստորական էր, ուստի Կյուրեղականներին չգրգռելու համար պատմիչը նրա անունը չի տվել:

Ադոնցը գտնում է նաեւ, որ չի կարելի չհամեմատել Կորյունի նշած Կոստանդնուպոլսում գործող 3 անձնավորություններին (Ղեւոնդ, Կորյուն, Եզնիկ - Լ. Բ.) Լիբերատի 2-3 անձերի հետ [35]: Եվ որ այդ կապակցությամբ Կորյունի շարադրանքում «Յետ այնորիկ» եւ «յետ ժամանակի» անորոշ դարձումները ցույց են տալիս, որ կամ պատմիչն անգետ է եւ կամ չի ուզում ճշգրիտ լինել որեւէ դիտավորությամբ [36]:

Հիմք ընդունելով օտար աղբյուրների վկայությունները, ըստ որոնց Ակակիոսը Ամիդի եպիսկոպոս է եղել 419-420 թվականներից, իսկ Ռաբիլասը (Բաբիլասը) Եդեսիայի եպիսկոպոս՝ 412-435 թվականներին, Ն. Ադոնցը գտնում է, որ Կորյունի նշած ժամանակը Մաշտոցի՝ Ամիդ, Եդեսիա, Սամոսատ քաղաքներն ուղեւորության մասին ճիշտ չէ. այն տեղի է ունեցել ոչ թե Հազկերտի թագավորության ութերորդ տարում, այլ 420-ից ոչ առաջ եւ ոչ ուշ քան 435 թվականը: Ավելի ճշտելով, նշում է՝ 420-425 թվականներին [37]: Եվ դրանից եզրակացնում է, որ «420-435 թվերին Մաշտոցի այցը Ամիդ, Սամոսատ եւ Մելիտինե որեւէ աղերս չունեին եւ չէին էլ կարող ունենալ գրերի գյուտի հետ: Մանկությունից հելլեն դպրության վարժ, նա պետք չուներ նաեւ կրթության: Եվ ոչ թարգմանչական գործը նրա համար գոնե առանձին ճանապարհորդության շարժառիթ կարող է նկատվել: Եթե գրերի առթիվ նա այցելել է հիշյալ քաղաքները եւ մանավանդ Եդեսիան... համենայն դեպս այցը եղել է 420 թվականից շատ առաջ. 406 թ. գրերն արդեն պատրաստ էին եւ նրանց հոգսը վերջացած: Հավանական է, որ գրի որոնումների շրջանին նա ծանոթացել է ոչ միայն Ռաբուլի, այլեւ ավելի հռչակավոր Թեոդոր Մամուեստացու հետ: Անձնական ծանոթության հետեւանքով է գրված եւ Թեոդորի մեզ հետաքրքրող գործը, Մաշտոցի... հասցեին: Գրությունը տեղի ունեցած պիտի լինի մինչեւ 406 թիվը...:

Հավանական է, որ Մաշտոցի այցը ասորի եպիսկոպոսներին, որի մասին պատմում է Կորյուն, կապ ունի հավատո խնդրի հետ եւ մոտ 430 թվականներին» [38]:

Եթե անվանի պատմաբանը չի ժխտում, այլ հավանական է համարում Մաշտոցի՝ վաղ շրջանում կատարած այցը նշված քաղաքները, ապա կարելի

է ենթադրել, որ Կորյունը նկատի է ունեցել նրա այդ ուղեւորությունը եւ ոչ այն ինչի մասին ասված է վերեւում: Երկրորդ այցի մասին Կորյունի լռությունը պետք է բացատրել ժամանակով եւ նրա զգուշությամբ ու ծածկամտությամբ: Ինչ վերաբերում է Ամիդի ու Եդեսիայի եպիսկոպոսների տարեթվերին, ապա այդ, կարծում ենք, համոզիչ փաստարկ չի կարող հանդիսանալ կասկածելու Կորյունի հաղորդած ժամանակի մասին: Ակակիոսը եւ Ռաբիլասը նշանավոր դեմքեր էին եւ դավանական պայքարում պատկանում էին հաղթանակածների բանակին, ուստի մեր պատմիչը կարող էր նպատակահարմար չհամարել նշելու նրանց քահանայական կոչումը, ժամանակն էլ թելադրել նրանց ներկայացնելու եպիսկոպոսական կոչումներով, չնայած նկարագրվող դեպքերը վերաբերվում են նրանց մինչ այդ կոչումը ստանալը:

Ն. Ադոնցը ընդհանրացնելով իր միտքը, գրում է. «Ինչպես եւ մեկնելու լինենք Կորյունի դիրքը եւ հարակից խնդիրները, մի բան է հաստատում, որ հայ եկեղեցու դավանաբանության կյուրեղյան խարիսխը ավանդ է Եփեսոսի ժողովից: Մաշտոցը եւ նրա աշակերտները, Ղեւոնդ եւ թեաբար Կորյուն, երեւան գալով ընդհանուր եկեղեցական ասպարեզում անմիջական մասնակցություն են ունեցել ճշմարտության որոնումներին եւ հիմնարկել են հայ դավանաբանական շենքը: Սերունդների միշտ արթուն զգացումը, միանգամ ստացած ժառանգությունը պահելու անդրդվելի կորովը բացատրելու է եւ նորանով, որ նա սրբագործված է եղել հայ լուսավորության ամոլների սրբազան աջով» [39]:

* * *

Հայրենասեր պատմիչ Կորյունը հիացած լինելով իր ուսուցչի ստեղծագործական հանճարով, միաժամանակ խորը գիտակցելով նրա հայտնագործության հեղափոխիչ նշանակությունն իր ժողովրդի ինքնագոյության պահպանման համար, ցույց է տվել այն մեծ հրճվանքն ու ցնծությունը, որ ապրել է հայ ժողովուրդը այդ օրերին: Այդ անելու համար, նա ինչպես ինքն է ասում, խիզախել է համեմատություն կատարել Մովսես մարգարեի եւ Մաշտոցի միջեւ:

Մեծ Մովսեսը, - գրում է պատմիչը, - այնպես ուրախ չի եղել Սինա լեռից իջնելու ժամանակ, որովհետեւ աստվածատես մարդն աստվածագիր հրամանն աստծուց առած եւ իր բազուկների վրա բռնած իջել է լեռից, բայց նա տխուր է եղել իր չարագործ ժողովրդի պատճառով, որը թիկունքը դեպի տիրոջն է դարձրել, տիրադրուժ է դարձել ու իր ձուլածո կուռքին է երկրպագել եւ աստծու հրամանաբերի սիրտը կոտրելով, սրտառուչ լացացրել էր: իսկ այն երանելին՝ Մաշտոցը, - ընդգծում է Կորյունը, - որի մասին գրել է ինքը, չի եղել այնպես, ինչպես Մովսեսը, այլ մա իր հոգեւոր մխիթարությամբ լցված գիտեցել է

իր ժողովրդի հոժարությունը եւ նրանց ուրախության հուսով լցված լինելով ճանապարհների կայաններն ավետաբեր են եղել նրա համար: Ապա պատմիչն ավելացնում է, որ ոչ ոք թող իրեն հանդուգն չհամարի իր ասածների համար, թե ինչպես մի շատ խոնարհ մարդու նմանեցնելով հավասարեցրել է մեծ Մովսեսին, որով թերեւս ինքը մեղադրվի [40]:

Եթե Կորյունին մեղադրելու եւ հալածելու մասին տեղեկություններ չեն պահպանվել, ապա նրա գրչակիցներին՝ Ղազար Փարպեցուն, Մովսես Խորենացուն եւ ուրիշներին, որպես Սահակ-Մաշտոցյան գործի անխոնջ մշակների, հալածանքների մասին որոշակի վկայություններ են մեզ հասել [41]:

Կորյունը նկարագրել է նաեւ Մաշտոցին ցույց տված ջերմ ընդունելության տեսարանները. երբ նա մոտեցել է թագավորական քաղաք Վաղարշապատին, Վռամշապուհն ու Սահակը նախարարագունդ ավագանու բոլոր բազմությունն իրենց հետ վերցնելով, քաղաքից դուրս են եկել դիմավորելու Մաշտոցին Ռահ (Երասխ) գետի ափին: Ցանկալի ողջույնը միմյանց տալուց հետո այնտեղից ցնծության ձայներով եւ հոգեւոր երգերով ու բարձրագույն օրհնություններով ետ են դարձել քաղաքը եւ տոնական ուրախությամբ անց կացրել օրերը [42]:

Բյուզանդական կայսրին այցելելուց հետո, վերադարձին, Մաշտոցին բոլոր քաղաքները դիմավորել են եւ երեւելի ընդունելություն կազմակերպել [43]:

Հայ ժողովրդի բոլոր խավերը ոչ միայն այդ օրերին հրճվանք են ապրել, այլեւ նրանց շատ ներկայացուցիչներ հագեցրել են ուսման իրենց ծարավը: Աշակերտներն ու անգետ մարդիկ, երկրի զանազան կողմերից ու գավառներից բազմությամբ եկել հասել են աստվածային գիտության բացված աղբյուրը [44]:

Կորյունը գիտակցել է գրերի գյուտի քաղաքական-համապետական խոշոր նշանակությունը: Ուսուցման գործի կազմակերպումը նրա մոտ պետական հիմքերի վրա է դրված: Ամենուր դրա կազմակերպիչներն են արքունիքը, թագավորները, իշխաններն ու հոգեւորականները: Արքունիքի եւ տեղական իշխանների միջոցներով բացվում են դպրոցներ, աչքի ընկած ուսումնականներին ուղարկում են արտասահման կատարելագործվելու:

Պատմիչի վկայությամբ Վռամշապուհ թագավորը «…հրամայել էր ամեն տեղ նույն նշանագրելով սովորեցնել-կրթել» [45]:

Պատմիչն ասում է, որ վրաց Բակուր թագավորն էլ, Մաշտոցի հորդորանքով, հրամայել էր իր իշխանության զանազան կողմերից եւ խառնաղանջ գավառներից մանուկներ ժողովել եւ տալ Մաշտոցի ձեռքը՝ նրանց սովորեցնելու համար [46]:

Այնուհետեւ, - գրում է Կորյունը, - Արեւմտյան Հայաստանի սպարապետը ստանալով հրամանը, շտապել է այն իսկույն կատարել. պատգամավորներ

է ուղարկել կայսեր իշխանության մեջ եղած հայոց գավառները՝ բազմաթիվ մանուկներ ժողովելու եւ դպրոցներ բաց անելու համար [47] :

Այնուհետեւ, Կորյունը վկայում է, որ Արեւմտյան Հայաստանում հայերի ուսման գործը կազմակերպելու նպատակով, Մաշտոցը մեկնել է Կ. Պոլիս՝ թույլտվություն ստանալու համար: Այնտեղ փառավոր ընդունելությունից հետո, նա անընդդիմանալի հրաման է առել կայսրից՝ մանուկներ ժողովելու եւ դպրոցներ բաց անելու համար [48]:

Պակաս հոգատարություն չի ցուցաբերել նաեւ Աղվանքի թագավորը. նրա հրամանով էլ «բազմաթիվ մանուկներ են ժողովել, արժանավոր ու հարմար տեղերում դպրոցներ բացել [49]:

Մաշտոցին մեծ օգնություն ու աջակցություն են ցույց տվել նաեւ Գողթնի, Սյունիքի ւո Գարդմանի իշխանները [50] :

Կորյունը գիտակցել է, որ լեզուն յուրաքանչյուր ժողովրդի միավորիչն է: Խոսելով Մաշտոցի կողմից ստեղծված վրացերեն նշանագրերի՝ կյանքում կիրառման արդյունքների մասին, գրել է, թե նա նրանց մեկ աստվածային պատգամներով կապեց, դարձրեց մեկ ազգ, մեկ աստծու փառաբանիչներ [51] :

* * *

Ըստ Կորյունի ժողովուրդներին մխիթարելու միջոցը գտնված էր: Մխիթարելու անհրաժեշտությունը թելադրված էր ստեղծված իրավիճակով: Երկրին ու ժողովրդին նորանոր արհավիրքներ էին սպասում, հայ պետականությունը հոգեվարք էր ապրում, Պարսկաստանն ու Բյուզանդիան վարում էին միաձուլման քաղաքականություն, որից տուժում էին նաեւ վրացիներն ու աղվանները:

Հանգամանքների բերումով, ստեղծված պայմաններում քրիստոնեությունն էր ազգապահպանման միջոցը, որն, ինչպես ասվեց, միջնադարյան իրավաընմբռնմամբ նույնացվում էր ազգ հասկացությանը:

Ստեղծված իրավիճակում անհրաժեշտ էր ընդհանուր թշնամու դեմ ստեղծել միասնական ճակատ:

Միասնական ճակատ ստեղծելու գաղափարն է հենց, որ առաջ է քաշում մեր պատմիչը եւ կարմիր թելի նման անցկացնում ամբողջ երկում:

Կորյունի մոտ ազգային խտրականություն չկա. նա հավասար չափով գովում է բոլոր նրանց, որոնք ջանք ու եռանդ չեն խնայում հիմնական նպատակի իրականացման գործում, այսինքն քրիստոնեության տարածման ու ամրապնդման եւ կրթական գործի կազմակերպման բնագավառներում, լինեն դրանք ասորի, թե հույն, հայ, թե վրացի կամ աղվան: Մեր պատմիչը նույնպես ազգությունը մարմնավորում է քրիստոնեություն հասկացության մեջ եւ գտնում

է, որ քրիստոնյա բոլոր ժողովուրդները պետք է ունենան մեկ նպատակ — այն է համերաշխություն, միասնություն, սեր եւ ձգտում բարուն ծառայելու:

Ցույց տալու համար այդ նպատակի իրականացման ասպարեզում Մաշտոցի մեծությունը, Կորյունը խիզախում է համեմատության միջոցով նմանություն տեսնել Քրիստոսի եւ Մաշտոցի, Պողոս առաքյալի եւ Մաշտոցի ծավալած գործունեության մեջ եւ դրանով հիմնավորել Մաշտոցի գործադրած ջանքերի անհրաժեշտությունն ու իրավասությունը Հայաստանում, Վրաստանում եւ Աղվանքում:

Խոսելով Ձիթենյաց լեռան վրա Քրիստոսի կատարած աղոթքի մասին, Կորյունը գրում է, թե առանց քննելու էլ իսկապես հայտնի է, որ Հիսուսը ոչ թե իր անձի, այլ համայն աշխարհին սովորեցնելու համար է այն արել, եւ ասել «Արթուն կացեք, որ փորձության մեջ չմտնեք» [52] :

Պողոսն էլ ասել է. «Հետեւեցեք սիրո, եւ ամենքը պիտի նախանձավոր լինեն հոգեւոր բաների... Լավ է ամեն ժամանակ նախանձել բարիներին» [53] :

Ըստ Կորյունի՝ աստվածասեր ընտրյալների գովքը ոչ թե նրանց պարծանքի համար է, այլ մարդկանց մեջ նախանձ շարժելու, որպեսզի միմյանցով քաջալերված՝ հասնեն իրեն նպատակին [54] :

Համեմատության մեջ դնելով Մաշտոցի կյանքը Քրիստոսի կյանքի հետ, հայրենասեր պատմիչը ցանկանում է հասկացնել , որ Մաշտոցն էլ աղոթել է իր աշխարհի համար եւ կոչ է արել «Արթուն կացեք, որ փորձության մեջ չմտնեք»: Այլ խոսքով. զգոն եղեք ու պատրաստ՝ դիմակայելու նոր փորձություններին:

Պատմագիրն ընդգծում է, թե Մաշտոցը Հայաստանում ծավալած գործունեության զուգընթաց, Վրաստանում էլ իր քարոզչական ու կրթական աշխատանքով կարգավորել էր աստվածապաշտության գործը [55] :

Ըստ Կորյունի, Աղվանքում էլ Մաշտոցի գործունեության շնորհիվ «վայրենամիտ, դատարկասուն եւ անասնաբարո մարդիկ մարգարեագետ եւ առաքելածանոթ ավետարանի ժառանգներ են դարձել» [56] :

Պատահական չէ, որ Կորյունը շեշտում է, թե Մաշտոցը Հայաստանի, Վրաստանի եւ Աղվանքի բոլոր կողմերում իր ամբողջ կյանքի ընթացքում, անվեհեր եւ առանց հապաղելու, իր իսկ ավետարանական եւ ողջապատում վարքով ամեն մարդու զարդարել է «Քրիստոսի զգեստով եւ հոգեպես» [57] :

Հետաքրքիր ու կարեւոր է Կորյունի հետեւյալ բացատրությունը. «Գործք առաքելոց»-ից բերելով՝ «Սկսեց Հիսուս գործել եւ սովորեցնել» միտքը, պատմիչը գրում է, թե այն պետք է հասկանալ ոչ թե «որպեսզի պարգեւի», այլ՝ սովորեցնի: Եվ նրա բարեխոսելը սրբերի համար մեզ սովորեցնելու նպատակով

է, որովհետեւ պետք է հասկանալ միմյանց, փոխանակ բարեխոսելու [58] :

Եթե պատմիչն իրեն իրավունք է վերապահում Սուրբ Գրքից բերված մտքերի մեջ տեսնելու իսկական իմաստը եւ տալու իր մեկնաբանությունը, ապա մենք էլ մեզ իրավունք ենք վերապահել նրա իսկական մտքերն ու նպատակը կարդալ ու հասկանալ սուրբ գրքերից բերված բազմաթիվ մեջբերումներում եւ դրանցով մթագնած իր իսկ շարադրանքում, այլ խոսքով նրա իսկ շարադրանքում, այլ խոսքով նրա իսկական մտքերն ու նպատակը կարդալ ու տեսնել տողամեջ, քողազերծ անել շարադրանքը, բացահայտել իրականը, որը ժամանակի թելադրանքով ստիպված մթության քողով է շղարշվել:

Միանգամայն իրավացի է Ն. Ադոնցը, երբ նկատում է, թե «հույն եւ լատին հին հիշատակարաններում կան քանի մի ակնարկներ եւ տեղեկություններ, որոնք, որքան եւ դիպվածական ու հատուկտոր, բայց եւ այնպես անսպասելի լույս են ցողում Մաշտոցի եւ յուրայինների կյանքի մի կարեւոր շերտի վրա: Գուցե եւ նրանք թույլ տան բարձրացնելու այն քողը, որ թվում է, թե ծգվում է Կորյունի երկի մեջ ոչ միայն Մաշտոցի, այլեւ իր՝ Կորյունի որոշ գործունեության վրա» [59] :

Եվ իսկապես, մեր պատմիչի մոտ պաշտպանական միասնական ճակատ ստեղծելու գաղափարը, ինչպես եւ մի շարք այլ երեւույթներ, շղարշված են կրոնական-դավանաբանական քողով եւ քրիստոնյա ժողովուրդների միասնության գաղափարով: Մի բան, որ տրամաբանական է, թելադրված է ժամանակի պայմաններով եւ համապատասխանում է ժամանակի ոգուն:

Կորյունին ճիշտ են հասկացել եւ ճիշտ եզրակացության հանգել Հ. Մանանդյանն ու Մ. Աբեղյանը: «...Կորյունի վկայություններից պարզվում է, — գրում է Հ. Մանանդյանը, — որ Հայաստանի հետ միաժամանակ, սերտ եւ բարեկամական միությամբ, իրենց դպրությունն էի զարգացնում եւ մշակութային ինքնուրույնությունը պաշտպանում նաեւ անդրկովկասյան հարեւան երկրները: Պայքարը մազդեղականության եւ Սասանյան Պարսկաստանի մշակութային համաձուլարար սպառնալիքի դեմ, ինչպես երեւում է, ընդհանուր գործ էր եղբայրական այդ երեք ժողովուրդնորի համար...:

Այս ընդհանուր անդրկովկասյան գործում Մեսրոպ Մաշտոցը, ակներեւորեն, աչքի ընկնող դեր է կատարել: Կորյունի պատմածից կարելի է եզրակացնել, որ հայ գրերի հանճարեղ ստեղծողը միաժամանակ եղել է նաեւ տաղանդավոր քաղաքագետ ու խոշոր կազմակերպիչ:

Սասանյան Պարսկաստանի դեմ մղված պայքարում նա աշխատում էր անվտանգ դարձնել իր երկրի թիկունքը հյուսիսից եւ ձգտում էր, ըստ երեւույթին,

ստեղծել լայն պաշտպանական ճակատ ընդդեմ ընդհանուր արտաքին թշնամու» [60] :

«Ընդհանուր դիմադրություն ու թիկունք ստեղծելու համար, — գրում է Մ. Աբեղյանը, — նույնը պետք էր առաջ բերել նաեւ Վրաստանում ու Աղվանքում, որոնց եկեղեցիները կապված էին հայերի հետ եւ նույն սպառնալիքի տակ էին: Այդ պատճառով Մաշտոցը հոգում է նաեւ վրացական ու աղվանական դպրության համար» [61] :

* * *

Պատահական չէ, որ Կորյունը հայ ժողովրդի, հետեւապես եւ վրաց ու աղվան ժողովուրդների համար գրերի ստեղծումը համարել է «աշխարհահոգ խորհուրդ» [62], «աշխարհահեծ հոգսեր» [63] : Եվ նա մեծ հիացմունքով ու հրճվանքով է տալիս դրանց իրականացման արդյունքները:

Այն ժամանակ, ասում է Կորյունը, անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստանը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծակ, միանգամից եկան հասան, հայաբարբառ, հայրենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, եւ առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց ավետարանի հետ միասին:

Ինչ սրտալիր ուրախություն էր այնտեղ, այնուհետեւ բացականչում է պատմիչը, եւ ինչ հաճելի տեսարան աչքի համար: Որովհետեւ մի երկիր, որ անունն անգամ չէր լսել այն կողմերի, ուր բոլոր աստվածային գործերը կատարվել էին, շատ շուտով, իսկույն իմացավ, բոլոր եղած բաները, ոչ միայն ժամանակով կատարվածները, այլեւ առաջագույն հավիտենականությունը [64], եւ հետո եկածները, սկիզբը եւ վերջը, եւ բոլոր աստվածային ավանդությունները [65] :

Նույն ոգեւորությամբ Կորյունը շարունակում է պատմել այն մասին, որ Սահակն ու Մաշտոցը Հայաստանի զանազան կողմերը, գավառներն են ուղարկում ճշմարտության աշակերտների խմբեր՝ գիտության մեջ կատարելության հասածներին, որպեսզի նրանք էլ ուրիշներին սովորեցնեն: Իսկ իրենք կրթում են արքունիքը բոլոր ազատագունդ բանակի հետ: Սահակն հատկապես ուսուցանում էր Մամիկոնյաններին, այդ թվում եւ Վարդանին:

Եկեղեցու այդ սյուները աշխատել են մարդկանց կրթել, հասկացնել ճշմարտության գիտությունը [66] :

Կորյունն այս մասին գրել է այն ժամանակ, երբ Հայաստանում Մամիկոնյաններն էին ազգապահպանման եւ ազգային ինքնագիտակցության բարձրացման ջահակիրները: Ճշմարիտ գիտության նպատակը, ըստ պատմիչի,

կրթելն էր, հասկացնելը, կյանքի խոսքը սերմանելը: Կյանքի խոսքը այն ժամանակ պետք է լիներ եւ էր ազգային ինքնագիտակցության բարձրացումը եւ վեհ հայրենասիրությունը: Այդ շատ լավ գիտակցել է մեր պատմիչը եւ պատահական չէ, որ շեշտը դրել է Մամիկոնյանների եւ ազատագունդ բանակի վրա. որի սպարապետն էր Սահակ կաթողիկոսի սան, հետագայում Ավարայրի ճակատամարտի հերոս Վարդան Մամիկոնյանը:

Պատահական չէ նաեւ այն, որ հայրենասեր պատմիչի մոտ ազգը, ժողովուրդը եւ հայրենիքը նույնացվում են: Հայաստան, Աղվանք երկրանունները միաժամանակ իմաստավորում են այդ երկրների ժողովուրդները: Դրանով Կորյունը ուզում է շեշտած լինել ժողովրդի ու հայրենիքի անքակտելի միասնությունը. ազգապահպանումը ապահովում էր եւ հայրենիքի պահպանումը:

Կորյունը աշխարհայացքը Աստվածաշնչի սահմաններից այն կողմ չի անցնում: Արտահայտելով իշխող մտայնության գաղափարախոսությունը եւ հիմք ընդունելով Ղուկաս ավետարանիչի գրած «Գործք առաքելոցը» [67], նա նույնպես գտնում է, որ ամեն ինչ աստված է ստեղծել, շնորհել, ուստի եւ Մաշտոցի հայտնագործությունը աստծու շնորհն է, դրանք աստվածատուր նշանագրեր են [68] : «Ամեն բան շնորհող աստծուց իսկապես պարգեւեց նրան (այդ) բախտը, նա իր սուրբ աջով հայրաբար ծնեց նոր եւ սքանչելի ծնունդներ — հայերեն լեզվի նշանագրեր» [69] :

Կորյունը համոզված է, որ ամեն ինչ ունի իր սկիզբը եւ վերջը.«...եւ ապա եկելոցն, սկզբանն եւ կատարածի...» [70] :

Լինելով դարի զավակ, Կորյունը հավատում է հրաշքներին, տեսիլներին եւ Մաշտոցին առանձին դեպքերում վերագրում է հրաշագործություններ: Երբ Մաշտոցը Գողթն գավառում «սերմանել էր կյանքի խոսքը», հայտնապես մեծամեծ հրաշքներ են երեւացել գավառի բնակիչներին եւ դեւերը զանազան կերպարանքներով փախել ընկել են մարերի կողմերը [71] :

Մաշտոցի թաղման կապակցությամբ էլ ասում է, թե մինչդեռ սրբի ձեռքերը կարկառված էին դեպի երկինք, խաչանման, լուսավոր ձեւով սքանչելի տեսիլ է երեւացել այն ապարանքի վրա, ուր վախճանվել էր երանելին [72] :

Աղվանքում, երբ Երեմիա եպիսկոպոսը սկսել է Աստվածաշունչը թարգմանել, մի ակնթարթում վայրենամիտ մարդիկ մարգարեագետ եւ առաքելածանոթ են դարձել [73] եւ այլն:

* * *

Կորյունի վկայությունն այն մասին, որ Կոստանդնուպոլսից նրանք իրենց հետ բերել են Նիկիո եւ Եփեսոսի եկեղեցական ժողովների կանոնները, կարեւոր

է Հայաստանում V դարի առաջին կեսում դավանաբանական պայքարի եւ մասամբ սոցիալ-դասակարգային-աղանդավորական շարժումների պատմության լուսաբանման համար: Պետք է ենթադրել, որ այդ կանոնները բերվել են Սահակ Պարթեւի եւ Մեսրոպ Մաշտոցի պահանջով, քանի որ, պատմիչի վկայությամբ, նրանք էլ Եփեսոսի ժողովից առաջ պայքարել են Հայաստան թափանցած աղանդների, հատկապես բորբորիտների եւ Նեստորի ուսուցիչ Թեոդորոս Մոպսուեստացու ուսմունքի դեմ: Եվ հասկանալի է, որ այդ կանոնները նրանց էլ է հետաքրքրել:

V դարի 20—40-ական թվականներին Բյուզանդիայում տեղի են ունենում աստվածաբանական մեծ վեճեր: 431 թվականին, երբ Կորյունն իր ընկերներով գտնվել է այնտեղ [74], հրավիրել է Եփեսոսի եկեղեցական ժողովը, որը դատապարտել է նեստորականությունը: Նրանց հայտնի են եղել ժողովում քննարկված հարցերը եւ որոշումները:

Լինելով իր ուսուցիչների սիրեցյալ ու հավատարիմ աշակերտը եւ ծայրաստիճան աստվածապաշտ, Կորյունը, հասկանալի է, բացասական վերաբերմունք պետք է ունենար այն ամենի նկատմամբ, ինչը խոչընդոտում է իր դավանանքի ամրապնդմանը:

Նկարագրելով Մաշտոցի գործունեությունը Արեւմտյան Հայաստանում, Կորյունը ասում է, որ այնտեղ նա ձեռնարկել էր բորբորիտների աղանդի քննությունը: Եվ երբ ոչ մի հնար չի գտել նրանց ուղղության բերելու, սկսել է խիստ ծանր տանջանքների ենթարկել: Իսկ երբ այդ էլ չի օգնել, այն ժամանակ հրամայել է սաստիկ ծեծել, ապա խանձել ու մրել եւ զանազան ձեւերով խայտառակել ու երկրից դուրս քշել [75] :

Կորյունի այն վկայությունը, որ Մաշտոցը Թեոդորոս Բ կայսերից հրաման է ստացել եկեղեցու դիրքերն ամրապնդելու համար, հալածելու բորբորիտներին եւ նա դաժանորեն հաշվեհարդար է տեսել նրանց հետ, ցույց է տալիս, որ այդ շարժումը շատ է անհանգստացրել Մաշտոցին, քանի որ այն ուղղված է եղել եկեղեցու դեմ, հասկանալի է, որ խոչընդոտել է նրա քարոզչական գործունեությանը:

Գիտակցելով գրերի գյուտի ոչ միայն որպես ուսուցման միջոցի, այլեւ իբրեւ քաղաքական պայքարի զենքի կարեւոր նշանակությունը, Կորյունը Մաշտոցի՝ ինչպես Արեւելյան, այնպես եւ Արեւմտյան Հայաստանում՝ ուսուցման գործի կազմակերպման, քարոզչական աշխատանքի, աղանդավորների ու հեթանոսների դեմ պայքարի ուղղությամբ ծավալած գործունեությունը ներկայացնում է որպես մի ամբողջություն, միահյուսված, որպես մեկը մյուսի

բաղկացուցիչ մասը:

Մաշտոցը Վռամշապուհ թագավորից հրաման է ստանում կազմակերպել ուսուցման գործը մարերի խուժադուժ կողմերում, որտեղի բնակիչները «դժվար մատչելի» էին ոչ միայն «իրենց դիվական, սատնայակիր, ճիվաղական բարքի, այլեւ խեցբեկագույն եւ կոշտ ու կոպիտ լեզվի պատճառով»: Կորյունը վկայում է, որ ձեռնարկելով այդ գործը, Մաշտոցը նրանցից շատերին դարձնում է պարզախոս, հռետորաբան, կրթված, աստվածատուր իմաստությանը ծանոթ: Եվ նրանք այնպես հանգամանորեն են խորամուխ եղել օրենքների ու պատգամների մեջ, որ այլեւս չեն նմանվել իրենց ազգակիցներին [76] :

Կորյունը գիտակցել է նաեւ, որ հասարակական տարբեր խավերի համար գրելիս, պետք է հաշվի առնել նրանց ընկալման կարողությունը: Նշելով, որ Մաշտոցը գրել է նաեւ ճառեր, նկատում է, որ դրանց մեջ՝ հանդերձյալ կյանքի, հարություն առնելու եւ նման այլ բաների մասին գրածները որպեսզի տխմարներին եւ մարմնական բաներով զբաղվողներին հեշտ ընդունելի եւ հեշտ հասկանալի լինեն, շատ նմանություններ եւ օրինակներ է հերյուրել աշխարհիս անցավոր բաներից [77] :

Լինելով հականեստորական, պարզ է, որ Կորյունը բացասական վերաբերմունք պետք է ունենար նրանց նկատմամբ: Խոսելով Թեոդորոս Մոպսուեստացու աշխատությունները Հայաստանում տարածելու մասին, նա գրում է, թե այն ժամանակ բերվել, երեւացել էին Թեոդորոս անունով մի հռոմեացի մարդու սուտապատում գրքերը, դատարկաբան ավանդությունները: Սուրբ եկեղեցիների հայրապետներն այդ մասին գրել ու հայտնել են Սահակին ու Մաշտոցին ու նրանց ջանքերով մեջտեղից վերացրել են դրանք, աշխարհից հալածելով՝ իրենց սահմաններից դուրս են վանել, որպեսզի «ոչ մի սատանայական ծուխ չխառնվի լուսավոր ուսմանը» [78] :

Կորյունը չի բացահայտում աղանդավորների, հեթանոսների եւ Թեոդորոսի ուսմունքի էությունը, բավարարվում է միայն պիտակավորմամբ: Առաջիններին՝ «անպատշաճ ու սուտ», երկրորդներին՝ «սատանայակիր, ճիվաղական, դիվական բարքի տեր», «վայրենամիտ, դատարկասուն եւ անասնաբարոյ» մարդիկ, նրանց լեզուն՝ խեցբեկագույն եւ կոշտ, ապրած տեղերը՝ խուժադուժ, անկարգ ու անխնամ [79], իսկ Թեոդորոսի ուսմունքը՝ «սուտապատում ընդունայնախօս ավանդութիւնք» անվանելով: ԵՎ այդ արել է գիտակցված: Նրա վկայությամբ, Անդրկովկասում Մաշտոցի ծավալած մտավորական շարժումը լայն աջակցություն է ստացել իշխող աշխարհիկ եւ հոգեւոր ֆեոդալների կողմից: Ֆեոդալ իշխանները, ինչպես ասվել է, արտաքին ու ներքին անապահով

պայմաններում, իրենց դիրքերը պահպանելու համար ամենազորեղ միջոցը տեսել են քրիստոնեական գաղափարախոսության մեջ, եկեղեցու մեջ, եւ հասկանալի է, ամեն կերպ շահագրգռված պետք է լինեին այդ գաղափարախոսության արագ արմատավորմանը, որի միակ միջոցը սեփական գիր ու գրականություն ունենալն էր: Այն ամենը, ինչ խորթ էր, ինչ կարող էր խոչընդոտել ու հարվածել քրիստոնեության ուսմունքի միասնությանը, անհամատեղելի էր իշխող մտայնության ու նպատակադրումների գրառման հետ: Այդպիսիք էին աղանդները: Կորյունը քաջ գիտակցել է, որ հեթանոսությունը դեռեւս կենսունակ է, հատկապես ծայրագավառներում: Բացահայտել հեթանոսների ու աղանդների նպատակները, առաջադրած խնդիրները, գաղափարները, այլ խոսքով՝ նրանց էությունը, կնշանակեր մասսայականացնել դրանք՝ հակառակ իր կամքի: Ահա նման հանգամանքի գիտակցումով է ղեկավարվել պատմիչը նրանց մասին գրելիս: Ավելին, դավանաբանական սայթաքում չանելու համար, նա ձգտել է «հաջողությամբ եւ ուղիղ նավել վարդապետական ծովի համատարած ալիքների վրայով» [80] :

Այդպես են մտածել ու գրել ոչ միայն Կորյունը, այլեւ նրանից հետո՝ ամբողջ միջնադարում, հայ, եւ ոչ միայն հայ, այլեւ գրեթե բոլոր ժողովուրդների պատմագիրները՝ չնչին բացառությամբ: Նրանց նման մտածելակերպը մեզ զրկել է շատ բան իմանալու հեթանոսության, աղանդավորների եւ սոցիալ-դասակարգային շարժումների պատմության, հատկապես նրանց գաղափարախոսության մասին:

Աստվածաբան Սոկրատես Սքոլաստիքոսը բացահայտ գրել է այդ մասին իր 7 «Եկեղեցական պատմություն» 7 հատորանոց աշխատության մեջ: Նշելով, որ գաղափարական հակառակորդին շատ ավելի հեշտ է հաղթել, երբ նրա դեմ է ուղղված հենց իր իսկ սեփական զենքը, ընդգծում է, թե մենք այդ չենք կարող անել, եթե ինքներս չտիրապետենք մեր հակառակորդների զենքին, սակայն այդ զենքը ձեռք բերելու ժամանակ պետք է հանդես բերել զգուշություն, որպեսզի չընկնենք նրանց հայացքների ազդեցության տակ [81] :

Կորյունը բարյացակամ է ճնշվածների, շահագործվողների նկատմամբ: Նա գոհունակությամբ ընդգծում է, որ Մաշտոցը շատ բանտարկյալներ, կալանավորներ եւ նեղյալներ է ազատել բռնակալների ձեռքից: Շատ անիրավ մուրհակներ է պատռել եւ շատ սգավորների ու նեղսրտածների իր մխիթարական վարդապետությամբ ակնկալություն եւ հույս է տվել [82] :

* * *

Կորյունի երկը, հատկապես վերջին մասը, շատ աղճատված է հասել մեզ,

եւ այդ աղճատումները կատարվել են արտագրողների ձեռքերով [83] :

Հ. Մանանդյանը համեմատելով Կորյունի վերջաբանի տվյալները գրերի գյուտի տարեթվի եւ մի քանի այլ հարցերի վերաբերյալ Ղազար Փարպեցու եւ այլ աղբյուրների տեղեկությունների հետ, գտնում է, որ Կորյունի Վերջաբանը, հատկապես ժամանակագրությունը, ուշ դարերում, հավանաբար, վերամշակման է ենթարկվել, իսկ Ղազար Փարպեցին եւ մյուս պատմագիրները օգտվել են Կորյունի իսկական բնագրից [84] : Միաժամանակ նա գտնում է, որ Կորյունի եւ Փարպեցու՝ Խորենացու հետ ունեցած հակասությունները, սրբագրված ու ընդմիջարկված են Խորենացու Պատմությունից [85] :

Ն. Ակինյանի կարծիքով «Կորիւն նախ հռետոր է եւ ապա պատմիչ. բայց պատմութիւնը չի զոհած իր հռետորութեան»: Ըստ նրա, Կորյունի ոճը «ունի ամրակուռ թեւերով բարձրասլաց ճախրանք. սպառազինուած եւ նորաձույլ հարստաբուռն բառերով, կը հիւսէ հաստահեղոյս պարբերութիւնները, կը հանէ պատկերներ ուժեղ գույներով, բայց միշտ համապատասխան բարձրութեան իր հերոսին, հաճոյ անոր ախորժանաց, ձուլուած անօր արուեստանոցի մեջ:

Իր նկարագրականով արուեստական է անշուշտ այս ոճը, անսովորական գրականութեան մեջ, բայց անոր մէն մի մասունք ծաղկաքաղ հանուած են գրական լեզուէն, հիւսած գրական ճաշակով եւ ամբողջութեան մեջ ինքնատիպ, վսեմ եւ վայելչական» [86] : Հակառակ Ն. Ակինյանի այս չափազանցրած գնահատականին, Մ. Աբեղյանը իրավացիորեն նշում է, որ Կորյունի գրության ոճը շատ ճոռոմ է, ավելորդություններն ու կրկնությունները շատ են: Իր իսկ՝ Կորյունի խոսքով ասած «ծաղկեցված» է: Անկանոն լեզվի պատճառով շատ հատվածներ անհասկանալի են, մթին, պակասում են անհրաժեշտ բառեր, կամ շատ կան ամբողջ նախադասություններ փոխարինող, յուրահատուկ նորահնար բառեր, այլլեւ բառերի կիրառություն՝ մեզ ոչ ծանորթ սովորական նշանակությամբ [87] :

Կորյունի ոճի մասին նույն կարծիքին է նաեւ Ե. Տեր-Մինասյանը [88] :

Մ. Աբեղյանը նշում է նաեւ, որ Կորյունի երկը դժվար մատչելի է եղել նաեւ միջին դարերում, այդ պատճառով առաջացել է մի նոր խմբագրություն (IX դար)՝ «Սուտ Կորյուն» անունով, Կորյունից քաղվածաբար բերված բնագրին ավելացել են տեղեկություններ Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից », որոնցից մի քանիսն անգամ հակասում են Կորյունի տվյալներին ու հաղորդածներին: Նոր խմբագրված այդ բնագիրը կրում է «Ի յիշատակ պատմութեան վարուց երանեւոյն սուրբ վարդապետին Մեսրոբայ, զոր ասացեալ է նորին աշակերտի Կորեան» խորագիրը [89] :

Կորյունի փոքրածավալ երկը մեծ կարեւորություն ունի իբրեւ ականատեսի վավերական հիշատակարան հայ գրականության սկզբնավորման մասին: Չլիներ հայ պատմագրության առաջնեկի մեսրոպատառ այդ հիասքանչ հուշարձանը, սերունդները գրեթե ոչինչ չէին իմանա հայ, վրաց եւ աղվան ժողովուրդների հոգեւոր ազատության ամենահզոր զենքի՝ գրերի ստեղծման ու հայ մատենագրության սկզբնավորման, դպրոցաշինության, կրթական գործի կազմակերպման, դրանց նկատմամբ հայ հասարակական խավերի վերաբերմունքի եւ աջակցության, առաջին հայ թարգմանիչների գործունեության, հեթանոսության ու աղանդների դեմ պայքարի միջոցների, քրիստոնեության արմատավորման պատմությունների մասին: Հետագա մեր պատմագիրների համար, որոնք անդրադարձել են նշված հարցերին, հիմնական աղբյուրը Կորյունի երկն է եղել: Այն V դարի հայ քաղաքական ու մշակութային կյանքի հեղափոխիչ իրադարձությունների գործուն մասնակցի գրչի արգասիք է եւ իբրեւ այդպիսին խիստ կարեւոր աղբյուր:

Ծանոթագրություններ

[1] Միջազգային պատմիչները «ազգ» բառը գործ են ածել էթնիկական առումով:

[2] Իրավացի է Հ. Մարկվարտը նշելով. «Հայ պատմագիրներին նվիրված յուրաքանչյուր աշխատանք պետք է սկսել Կորյունից, որը նրանց առաջնորդն է»(տե՛ս «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 136, ծան.1): Անվանի հայագետը հավանաբար առաջնեկի իմաստով է գրել:

[3] Ըստ Ն. Ակինյանի, Վարքի խորագիրն է «Պատմութիւն վարուց եւ կենաց առն երանելւոյ Մաշտոց վարդապետի, զոր արարեալ է նորին աշակերտի Կորեան» (Տե՛ս Կորիւն, Վարք Ս.Մաշտոցի, Վիեննա, 1952, Ներածութիւն, էջ ԺԶ):

[4] Տե՛ս Կորյուն, Վարք Մաշտոցի, Մ. Աբեղյանի Առաջաբանի էջ 8, Երեւան, 1941: Ն. Ակինյանը իրավացիորեն կշտամբում է Նորայր Բյուզանդացուն այն բանի համար, որ նա առանց հիմնավորելու Կորյունին համարում է Ագաթանգեղոսի եւ Փավստոսի երկերի թարգմանիչ: Սակայն ինքն էլ իր ենթադրությունները ներկայացնում է իբրեւ իրողություն: Այսպես, գրում է, թե Մաշտոցի մահից հետո «Փափազ յատնուեցաւ աշակերտաց ժողովի մեջ, որ անմահացուի Վարդապետի յիշատակը գրաւոր յիշատակարանով, ամենուն ուշադրութիւն ուղղեցաւ Կորիւնի, իբրեւ միակի, որ ատակ էր այդ գործի, եւ Յովսեփ գլխաւորն ժողովին պաշտոնապէս յանձնարարեց Կորիւնի մատենագրել երանելւոյն վարքը» (էջ ԻԶ): Գրում է, թե Կորյունը Վարքը գրել է 440 թվականի մարտ-մայիս ամիսներին

եւ իբր այն կարդացել է Մաշտոցի դին Օշական փոխադրելու հանդեսին՝ 440 թվականի հունիսին, հետո մշակել է եւ 441/2 բ.հրապարակ հանել (էջ ԻԱ—ԻԲ): Սրանք սակայն, սոսկ ենթադրություններ են առանց աղբյուրագիտական հիմքի: Իր իսկ Ն.Ակինյանի խոսքերով ասած «Անսանձ ձիարշաւ է» (էջ ԻԱ):

[5] Տես Կորյուն, էջ 99:

[6] Տես Մ. Աբեղյան, Հայ հին գրականության պատմություն, հատ.1, էջ 151: Ն Ակինյանը գրում է. «ոչ միայն աշակերտակից, այլ թերեւս հայրենակից» (տես Կորիւն, Վարք Ս.Մաշտոցի, Վիեննա, 1952, Ներածութիւն, էջ ԺԸ):

[7] Ըստ Ն. Ակինյանի՝ 395 թվականին, սակայն առանց հիմնավորելու (տես նշվ. աշխ., էջ ԺԷ):

[8] Կորյուն, էջ 58:

[9] Ն. Ադոնց, Մաշտոցը եւ նրա աշակերտները ըստ օտար աղբյուրների (տես «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, Երեւան, 1962, էջ 233):

[10] Տես նույն տեղում, էջ 235:

[11] Նույն տեղում, էջ 227:

[12] Տես Կորյուն, էջ 54:

[13] Տես Կորյուն, էջ 57:

[14] Տես նույն տեղում:

[15] Տես նույն տեղում, էջ 33:

[16] Նույն տեղում, էջ 99:

[17] Այսինքն ս. Գրքից եւ առաքյալներից հետո ստեղծված կանոնական գրվածքներից:

[18] Կորյուն, էջ 35:

[19] Ն. Ադոնց, նշվ. հոդվածը, էջ 241:

[20] Տես «Վարք Մաշտոցի», Մ. Աբեղյանի առաջաբան, էջ 14:

[21] Տես Կորյուն, էջ 99:

[22] Տես նույն տեղում:

[23] Տես «Վարք Մաշտոցի», Մ. Աբեղյանի առաջաբան, էջ 16:

[24] Նույն տեղում, էջ 12:

[25] Տես նույն տեղում, էջ 79:

[26] Տես նույն տեղում, էջ 13:

[27] Կ. Քիպարեան, Պատմութիւն հայ գրականութեան, առաջին մաս, Վենետիկ, 1944, էջ 66:

[28] Ն. Ադոնց, նշվ. հոդվածը, էջ 221:

[29] Նույն տեղում, էջ 227:

[30] Նույն տեղում:

[31] Տես նույն տեղում, էջ 226:

[32] Հ. Մանանդյան, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ ժողովրդի պայքարը մշակութային ինքնուրույնության համար (տե՛ս «Մեսրոպ Մաշտոց», հոդվածների ժողովածու, էջ 53):

[33] Տես Ն. Ադոնց, նշվ. հոդվածը, էջ 237:

[34] Կորյուն, էջ 49:

[35] Տես Ն. Ադոնց, նշվ. հոդվածը, էջ 235:

[36] Տես նույն տեղում, էջ 225:

[37] Տես նույն տեղում, էջ 224:

[38] Ն. Ադոնց, նշվ. հոդվածը, էջ 236:

[39] Ն. Ադոնց, նշվ. հոդվածը , էջ 241:

[40] Տես Կորյուն, էջ 53:

[41] Այդ մասին կասվի նշված պատմիչների մասին խոսելիս:

[42] Կորյուն, էջ 55:

[43] Նույն տեղում, էջ 69:

[44] Տես նույն տեղում, էջ 59:

[45] Տես նույն տեղում, էջ 45:

[46] Տես նույն տեղում, էջ 63:

[47] Տես նույն տեղում, էջ 67:

[48] Տես նույն տեղում, էջ 69:

[49] Տես նույն տեղում, էջ 71:

[50] Տես նույն տեղում, էջ 61, 63, 73:

[51] Տես նույն տեղում, էջ 65:

[52] Կորյուն, էջ 85:

[53] Տես նույն տեղում, էջ 33:

[54] Տես Կորյուն, էջ 35:

[55] Նույն տեղում, էջ 65:

[56] Տես նույն տեղում, էջ 71-73:

[57] Նույն տեղում, էջ 79:

[58] Նույն տեղում, էջ 85:

[59] Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 200:

[60] Հ. Մանանդյան, նշվ. հոդվ., էջ 61-62:

[61] Մ. Աբեղյան, Մեսրոպ Մաշտոցը եւ հայ գրի ու գրականության սկիզբը, . «Մեսրոպ Մաշտոց» հոդվածների ժողովածու, էջ 299:

[62] Տես Կորյուն, էջ 43:
[63] Տես նույն տեղում, էջ 49:
[64] Այսինքն՝ աշխարհարարումից առաջ եւ հետո եղածը աշխարհի սկիզբն ու վերջը:
[65] Տես Կորյուն, էջ 57:
[66] Տես նույն տեղում, էջ 59:
[67] Տես «Նոր կտակարան, չորս ավետարաններ եւ Գործք Առաքելոց», Էջմիածին, 1969, էջ 382:
[68] Տես Կորյուն, էջ 49:
[69] Տես նույն տեղում:
[70] Նույն տեղում, էջ 56:
[71] Տես նույն տեղում, էջ 41:
[72] Տես նույն տեղում, էջ 93:
[73] Տես նույն տեղում, էջ 71-73:
[74] Վերեւում արդեն ասվել է Ն. Ադոնցի կարծիքը՝ նրանց այնտեղ մեկնելու ժամանակի եւ նպատակի մասին:
[75] Կորյուն, էջ 69:
[76] Տես Կորյուն, էջ 55:
[77] Տես նույն տեղում, էջ 79:
[78] Տես նույն տեղում, էջ 87:
[79] Տես Կորյուն, էջ 41, 61, 87:
[80] Տես նույն տեղում, էջ 25:
[81] Տես Socrates (Scholasticus). The Ecclesiastial History, L. 1914, p. 194
[82] Տես Կորյուն, էջ 81:
[83] Տես Կորյուն, Մ. Աբեղյանի Առաջաբանը, էջ 18:
[84] Տես Հ. Մանանդյան, նշվ. հոդվածը, էջ 54-56:
[85] Տես նույն տեղում, էջ 102-103:
[86] Տես Ն. Ակինյան, նշվ, աշխ., էջ ԻԷ:
[87] Տես Կորյուն, Մ. Աբեղյանի առաջաբանը, էջ 18:
[88] Տես Ե. Տեր-Մինասյան, Ոսկեդարի հայ գրականությունը, Երեւան, 1946, էջ 29:
[89] Տես Կորյուն, Մ. Աբեղյանի Առաջաբանը, էջ 18:

Հեղինակ Բաբայան Լևոն (Լեո)
AUA American University of Armenia կայք